Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-422-04.11.2022-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» 1998 թվականի նոյեմբերի 11-ի ՀՕ-261 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների (այսուհետ՝ հուշարձան) հայտնաբերման, վավերագրման, ուսումնասիրման, պետական հաշվառման, պահպանության, օգտագործման, ամրակայման, նորոգման, վերականգնման, տեղափոխման, փոփոխման, ինչպես նաեւ դրանց պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հուշարձանները գտնվում են պետության պահպանության ներքո:»:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 1.1-ին հոդվածով.

«Հոդված 1.1 Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հասկացությունները.

1) **Պատմության և մշակույթի անշարժ հուշարձան** - պետական հաշվառման վերցված և հուշարձանի կարգավիճակ ունեցող պատմական կամ հնագիտական կամ ճարտարապետական կամ մոնումենտալ արվեստի կամ գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող հնագիտական շերտերը, քարեդարյան կայանները, քարայր-կացարանները, կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց զբաղեցրած եւ պատմականորեն դրանց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, որմնանկարները, պատմամշակութային արգելոցները, պատմական լանդշաֆտները եւ հիշարժան վայրերը, պատմական բնակավայրերի քաղաքաշինական եւ պատմական կենտրոնները՝ անկախ պահպանվածության աստիճանից,

2) **պատմամշակութային օբյեկտ** - նոր հայտնաբերված եւ պետական հաշվառման վերցված օբյեկտ, որը դեռեւս չի ստացել նորահայտ հուշարձանի կարգավիճակ,

3) **նորահայտ հուշարձան** - մինչեւ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկվելը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանվող պատմական, գիտական, գեղարվեստական կամ

մշակութային այլ արժեք ունեցող որոշակի կարգավիճակ ստացած նոր հայտնաբերված կամ նոր արժեքավորված օբյեկտ:

4) **հուշարձանի տարածք** - հուշարձանի տարածքը իր զբաղեցրած եւ պատմականորեն ու գործառնական առումով դրա հետ կապված եւ սահմանված կարգով առանձնացված հողատարածքն է,

5) **պատմական միջավայր** - մարդու գործունեության արդյունքում ձեւավորված պատմական եւ մշակութային որոշակի արժեք ունեցող միջավայր,

6) **հուշարձանի պահպանական գոտիներ** - հուշարձանի պահպանության, կառուցապատման կարգավորման կամ լանդշաֆտի պահպանման գոտիների տարածքներ եւ դրանցում օգտագործման պայմանակարգեր (ռեժիմ) սահմանող փաստաթուղթ,

7) **հուշարձանի պահպանության գոտի** - հուշարձանի պատմական միջավայրի անմիջական ազդեցության եւ հնարավոր հնագիտական շերտերի որոշակի պահպանության պայմանակարգ (ռեժիմ) ունեցող տարածք,

8) **կառուցապատման կարգավորման գոտի** - հուշարձանի քաղաքաշինական միջավայրի պահպանության, ներդաշնակ եւ բարենպաստ տեսողական ընկալման պայմանակարգ (ռեժիմ) ունեցող տարածք,

9) **լանդշաֆտի (տեղանքապատկերի) պահպանման գոտի** - հուշարձանի պատմական միջավայրի բնական կամ պատմականորեն ձեւավորված բնապատմական ռելիեֆի, ջրային մակերեսների եւ բուսականության պահպանության ռեժիմ ունեցող տարածք,

10) **հուշարձանի ուսումնասիրություն** - հուշարձանի ու դրա տարածքի մատենագրական, արխիվային, գիտահետազոտական աղբյուրներից նյութերի վավերագրում, հավաքում, հնագիտական, երկրաբանական, ինժեներական (նյութագիտական, կոնստրուկտորական, տեխնիկական վիճակի եւ այլ) հետազոտություններ,

11) **հնագիտական հետախուզում** - որոշակի տարածքների համալիր հետազոտություն հնագիտական օբյեկտների հայտնաբերման, քարտեզագրման, նկարագրության նպատակով, վերգետնյա նկատվող կառույցների կամ այլ բաղկացուցիչների տարբեր մեթոդներով վավերագրում կամ փոքրածավալ ստուգողական պեղումների իրականացում,

12) **հնագիտական պեղում** - մշակութային շերտերի, հնագիտական օբյեկտների ու հուշարձանների՝ դաշտային պայմաններում կատարվող գիտահետազոտական եւ գիտագործնական համալիր ուսումնասիրություններ, որոնք իրականացվում են տարածքների վերգետնյա, ստորգետնյա եւ ստորջրյա տեղազննության, մշակութային շերտերի բացման, հայտնաբերված նյութական մնացորդների ու հետքերի տարբեր եղանակներով փաստագրման եւ վավերագրման միջոցով,

13) **հուշարձանի վերականգնողական աշխատանք** - հուշարձանի ամրակայման, նորոգման եւ վերականգնման գործունեության իրականացում,

14) **հուշարձանի պահպանական գոտիների օգտագործման պայմանակարգ (ռեժիմ)** - հուշարձանների պահպանական գոտիների պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման պայմաններին, պահանջներին եւ սահմանափակումներին վերաբերող պարտադիր դրույթներ,

15) **պատմամշակութային հիմնավորման նախագիծ** - պատմական բնակավայրերի, դրանց կենտրոնների կամ առանձին հատվածների պահպանության եւ օգտագործման պայմանակարգեր, ինչպես նաեւ կառուցապատման թույլատրելի դրույթներ սահմանող նախագիծ (ծրագրային փաստաթուղթ),

16) **հուշարձանների պետական կադաստր** - պետական տեղեկատվական համակարգ, որը պարունակում է տեղեկություններ հուշարձանների եւ դրանց տարածքների, պահպանական գոտիների եւ դրանցում առկա հողատեսքերի, բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման նախագծերի, բնապատմական եւ պատմամշակութային արգելոցների, պետական հաշվառման փաստաթղթերի եւ վավերագրերի մասին,

17) **մշակութային շերտ** - մարդկային գործունեության արդյունքում առաջացած, այդ գործունեության մասին վկայող նյութական մնացորդներ պարունակող վերգետնյա, ստորգետնյա կամ ստորջրյա շերտ,

18) **պատմական բնակավայր** - Հայաստանի Հանրապետության ժողովրդի մշակութային ինքնատիպության պահպանության համար կարեւոր նշանակություն ունեցող՝ հնագիտական, պատմական, ճարտարապետական, քաղաքաշինական, գեղագիտական, գիտական կամ սոցիալ-մշակութային այլ արժեքներ ներառող բնակավայր,

19) **հուշարձանների եւ պատմական միջավայրի պահպանություն** - հուշարձանների եւ դրանց պատմական միջավայրի պահպանության ապահովման կանխարգելիչ միջոցառումների համակարգ,

20) **արգելոց-թանգարան** - շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, գիտալուսավորչական, կրթական, գիտատեղեկատվական, մշակութային գործունեություն իրականացնող կազմակերպություն, որը ստեղծվում է իրենց ավանդական պատմական (մշակութային եւ բնական) միջավայրում անշարժ հուշարձանների, հուշարձանախմբերի ուսումնասիրման, հանրահռչակման եւ օգտագործման, ինչպես նաեւ անշարժ հուշարձանախմբերի, պատմական, բնապատմական միջվայրի, պատմամշակութային հողերի եւ դրանց հարող տեղանքապատկերների /լանդշաֆտի/ ամբողջական պահպանումն իրականացնելու նպատակով:

21) **հնագիտական պարկ** - հնագիտական այն համալիր հաստատություններն են, որոնք ստեղծվել են հնագիտական ժառանգության թանգարանացման իրագործման համար հնագույն ժամանակներում պատմականորեն ձեւավորված տարածքների վրա հստակ տեղայնացված հուշարձանների սահմաններում՝ ապահովելու վերջիններիս հնագիտական, մշակութային եւ բնական ամբողջական արժեքների պահպանությունը, հետազոտումը եւ հանրահռչակումը:

22) համամարդկային նշանակության հուշարձան- Հայ ժողովրդի պատմության, նրա նյութական և հոգևոր մշակույթի նշանակալի հուշարձանների առավել բարձրարժեք, բացառիկ նմուշները, որոնք ունեն պատմության, արվեստի կամ գիտության տեսանկյունից բացառիկ համընդգրկուն արժեք՝ կարող են սահմանված կարգով ընդգրկվել համաշխարհային ժառանգության ցանկում:»:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1. վերնագրի «իրավասությունը» բառը փոխարինել «իրավասությունները» բառով.

2. 1-ին մասը «դ)» կետից հետո լրացնել «դ1)» կետով հետևյալ բովանդակությամբ.

«դ1) հաստատում է պետական սեփականություն համարվող հուշարձանների գույքային իրավունքների պետական գրանցման կարգը.».

3. «1-ին մասի ե) կետի «արգելոցներ» բառից հետո լրացնել «, արգելոց-թանգարաններ, հնագիտական պարկեր» բառերը.

4. 1-ին մասը «է)» կետից հետո լրացնել «է1)» կետով հետեւյալ բովանդակությամբ.

«է1) հաստատում է հուշարձանների պետական ցուցակում նորահայտ հուշարձան ընդգրկելու եւ պետական ցուցակից հուշարձան հանելու վերաբերյալ չափորոշիչները:»:

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1. վերնագրի «իրավասությունը» բառը փոխարինել «իրավասությունները» բառով.

2. 1-ին մասը «է)» կետից հետո լրացնել նոր «է1)» եւ «է2)» կետերով հետեւյալ բովանդակությամբ.

Է1) հաստատում է հուշարձանների տարածքներում տեղադրվող տեղեկատվական ցուցանակների ձեւը.

Է2) հաստատում է հուշարձանների պահպանական պարտավորագրի ձեւը:»:

Հոդված 5. Օրենքի 14-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 14. Հուշարձանների պետական ցուցակներում նորահայտ հուշարձան ընդգրկելը եւ ցուցակից հանելը

1. Հուշարձանների պետական ցուցակներում նորահայտ հուշարձան ընդգրկելը, ցուցակներից հանելը կատարվում է ըստ համապատասխան չափորոշիչների՝ լիազորված մարմնին կից գործող փորձագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

2. Հուշարձանների պետական ցուցակում նոր հուշարձան՝ պատմամշակութային օբյեկտ ընդգրկելու առաջարկություն կարող են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության եւ օտար երկրների պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության գիտական, մշակութային կազմակերպությունները ու ստեղծագործական միությունները, ինչպես նաեւ կրոնական կազմակերպությունները՝ համապատասխան հիմնավորմամբ եւ տեղեկատվությամբ դիմելով լիազոր մարմնին:

3. Հուշարձանը պետական ցուցակից հանվում է միայն այն դեպքում, եթե այն այլեւս գոյություն չունի կամ կորցրել է իր պատմամշակութային եւ գիտական արժեքը:»:

Հոդված 6. Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 22-րդ կետով.

«22) Կառավարության սահմանած կարգով իրականացնում է պետության սեփականությունը համարվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների գույքային պետական գրանցումը.»:

Հոդված 7. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 35.1 հոդվածով.

«Հոդված 35.1. Հուշարձանների նկատմամբ իրավունքների պետական գրանցումը

1. Հուշարձանների վերաբերյալ բոլոր գործարքների Հոդված մասին տվյալները գրանցվում են լիազոր մարմնի կողմից:

2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման բնագավառի լիազոր մարմինը՝

1) պետական գրանցման օբյեկտը հուշարձան հանդիսանալու մասին տեղեկությունը ներառում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում.

2) հուշարձանի սեփականատիրոջ կամ օգտագործողի փոփոխության մասին տեղեկությունը տրամադրում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի լիազոր մարմնին:»:

Հոդված 8. Եզրափակիչ եւ անցումային դրույթ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով լրացվող էլ1) կետով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո՝ 9-ամսյա ժամկետում, իսկ 4-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող «էլ1)» և «էլ2)» կետերով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո՝ 12-ամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ

~~Առաջին ընթերցում~~

~~Կ 422-04.11.2022-ԳԿ-011/1~~

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին» 1998 թվականի նոյեմբերի 11-ի~~.~~ ՀՕ-261 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների (այսուհետ՝ հուշարձան) հայտնաբերման, վավերագրման, ուսումնասիրման, պետական հաշվառման, պահպանության, օգտագործման, ամրակայման, նորոգման, վերականգնման, տեղափոխման, փոփոխման, ինչպես նաեւ դրանց պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հուշարձանները գտնվում են պետության պահպանության ներքո:»:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 1.1-ին հոդվածով.

«Հոդված 1.1 Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հասկացությունները.

1) Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձան - պետական հաշվառման վերցված եւ հուշարձանի կարգավիճակ ունեցող պատմական կամ հնագիտական կամ ճարտարապետական կամ մոնումենտալ արվեստի կամ գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող հնագիտական շերտերը, քարեդարյան կայանները, քարայր-կացարանները, կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց զբաղեցրած եւ պատմականորեն դրանց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, որմնանկարները, պատմամշակութային արգելոցները, պատմական լանդշաֆտները եւ հիշարժան վայրերը, պատմական բնակավայրերի քաղաքաշինական եւ պատմական կենտրոնները՝ անկախ պահպանվածության աստիճանից,

2) պատմամշակութային օբյեկտ - նոր հայտնաբերված եւ պետական հաշվառման վերցված օբյեկտ, որը դեռեւս չի ստացել նորահայտ հուշարձանի կարգավիճակ,

3) նորահայտ հուշարձան - մինչեւ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկվելը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանվող պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող որոշակի կարգավիճակ ստացած նոր հայտնաբերված կամ նոր արժեքավորված օբյեկտ:

4) հուշարձանի տարածք - հուշարձանի տարածքը իր զբաղեցրած եւ պատմականորեն ու գործառնական առումով դրա հետ կապված եւ սահմանված կարգով առանձնացված հողատարածքն է,

5) պատմական միջավայր - մարդու գործունեության արդյունքում ձեւավորված պատմական եւ մշակութային որոշակի արժեք ունեցող միջավայր,

6) հուշարձանի պահպանական գոտիներ - հուշարձանի պահպանության, կառուցապատման կարգավորման կամ լանդշաֆտի պահպանման գոտիների տարածքներ եւ դրանցում օգտագործման պայմանակարգեր (ռեժիմ) սահմանող փաստաթուղթ,

7) հուշարձանի պահպանության գոտի - հուշարձանի պատմական միջավայրի անմիջական ազդեցության եւ հնարավոր հնագիտական շերտերի որոշակի պահպանության պայմանակարգ (ռեժիմ) ունեցող տարածք,

8) կառուցապատման կարգավորման գոտի - հուշարձանի քաղաքաշինական միջավայրի պահպանության, ներդաշնակ եւ բարենպաստ տեսողական ընկալման պայմանակարգ (ռեժիմ) ունեցող տարածք,

9) լանդշաֆտի (տեղանքապատկերի) պահպանման գոտի - հուշարձանի պատմական միջավայրի բնական կամ պատմականորեն ձեւավորված բնապատմական ռելիեֆի, ջրային մակերեսների եւ բուսականության պահպանության ռեժիմ ունեցող տարածք,

10) հուշարձանի ուսումնասիրություն - հուշարձանի ու դրա տարածքի մատենագրական, արխիվային, գիտահետազոտական աղբյուրներից նյութերի վավերագրում, հավաքում, հնագիտական, երկրաբանական, ինժեներական (նյութագիտական, կոնստրուկտորական, տեխնիկական վիճակի եւ այլ) հետազոտություններ,

11) հնագիտական հետախուզում - որոշակի տարածքների համալիր հետազոտություն հնագիտական օբյեկտների հայտնաբերման, քարտեզագրման, նկարագրության նպատակով, վերգետնյա նկատվող կառույցների կամ այլ բաղկացուցիչների տարբեր մեթոդներով վավերագրում կամ փոքրածավալ ստուգողական պեղումների իրականացում,

12) հնագիտական պեղում - մշակութային շերտերի, հնագիտական օբյեկտների ու հուշարձանների՝ դաշտային պայմաններում կատարվող գիտահետազոտական եւ գիտագործնական համալիր ուսումնասիրություններ, որոնք իրականացվում են տարածքների վերգետնյա, ստորգետնյա եւ ստորջրյա տեղազննության, մշակութային շերտերի բացման, հայտնաբերված նյութական մնացորդների ու հետքերի տարբեր եղանակներով փաստագրման եւ վավերագրման միջոցով,

13) հուշարձանի վերականգնողական աշխատանք - հուշարձանի ամրակայման, նորոգման եւ վերականգնման գործունեության իրականացում,

14) հուշարձանի պահպանական գոտիների օգտագործման պայմանակարգ (ռեժիմ) - հուշարձանների պահպանական գոտիների պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման պայմաններին, պահանջներին եւ սահմանափակումներին վերաբերող պարտադիր դրույթներ,

15) պատմամշակութային հիմնավորման նախագիծ - պատմական բնակավայրերի, դրանց կենտրոնների կամ առանձին հատվածների պահպանության եւ օգտագործման պայմանակարգեր, ինչպես նաեւ կառուցապատման թույլատրելի դրույթներ սահմանող նախագիծ (ծրագրային փաստաթուղթ),

16) հուշարձանների պետական կադաստր - պետական տեղեկատվական համակարգ, որը պարունակում է տեղեկություններ հուշարձանների եւ դրանց տարածքների, պահպանական գոտիների եւ դրանցում առկա հողատեսքերի, բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման նախագծերի, բնապատմական եւ պատմամշակութային արգելոցների, պետական հաշվառման փաստաթղթերի եւ վավերագրերի մասին,

17) մշակութային շերտ - մարդկային գործունեության արդյունքում առաջացած, այդ գործունեության մասին վկայող նյութական մնացորդներ պարունակող վերգետնյա, ստորգետնյա կամ ստորջրյա շերտ,

18) պատմական բնակավայր - Հայաստանի Հանրապետության ժողովրդի մշակութային ինքնատիպության պահպանության համար կարեւոր նշանակություն ունեցող՝ հնագիտական, պատմական, ճարտարապետական, քաղաքաշինական, գեղագիտական, գիտական կամ սոցիալ-մշակութային այլ արժեքներ ներառող բնակավայր,

19) հուշարձանների եւ պատմական միջավայրի պահպանություն - հուշարձանների եւ դրանց պատմական միջավայրի պահպանության ապահովման կանխարգելիչ միջոցառումների համակարգ,

20) արգելոց-թանգարան - շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, գիտալուսավորչական, կրթական, գիտատեղեկատվական, մշակութային գործունեություն իրականացնող կազմակերպություն, որը ստեղծվում է իրենց ավանդական պատմական (մշակութային եւ բնական) միջավայրում անշարժ հուշարձանների, հուշարձանախմբերի ուսումնասիրման, հանրահռչակման եւ օգտագործման, ինչպես նաեւ անշարժ հուշարձանախմբերի, պատմական, բնապատմական միջվայրի, պատմամշակութային հողերի եւ դրանց հարող տեղանքապատկերների /լանդշաֆտի/ ամբողջական պահպանումն իրականացնելու նպատակով:

21) հնագիտական պարկ - հնագիտական այն համալիր հաստատություններն են, որոնք ստեղծվել են հնագիտական ժառանգության թանգարանացման իրագործման համար հնագույն ժամանակներում պատմականորեն ձեւավորված տարածքների վրա հստակ տեղայնացված հուշարձանների սահմաններում՝ ապահովելու վերջիններիս հնագիտական, մշակութային եւ բնական ամբողջական արժեքների պահպանությունը, հետազոտումը եւ հանրահռչակումը

22) Համամարդկային նշանակության հուշարձան- հայ ժողովրդի պատմության, նրա նյութական և հոգևոր մշակույթի նշանակալի հուշարձանների առավել բարձրարժեք, բացառիկ նմուշները, որոնք ունեն պատմության, արվեստի կամ գիտության տեսանկյունից բացառիկ համընդգրկուն արժեք, կարող են սահմանված կարգով ընդգրկվել համաշխարհային ժառանգության ցանկում:»:»::»:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1. վերնագրի «իրավասությունը» բառը փոխարինել «իրավասությունները» բառով.

~~2.~~ ***2. 1-ին մասը «դ)» կետից հետո լրացնել «դ1)» կետով հետևյալ բովանդակությամբ.***

«դ1) հաստատում է պետական սեփականություն համարվող հուշարձանների գույքային իրավունքների պետական գրանցման կարգը.».

3. «1-ին մասի ե) կետի «արգելոցներ» բառից հետո լրացնել «, արգելոց-թանգարաններ, հնագիտական պարկեր» բառերը:

~~3~~4. . 1-ին մասը~~ռւմ~~ «է)» կետից հետո լրացնել «է1)» կետով հետեւյալ բովանդակությամբ.

«է1) հաստատում է հուշարձանների պետական ցուցակում նորահայտ հուշարձան ընդգրկելու եւ պետական ցուցակից հուշարձան հանելու վերաբերյալ չափորոշիչները:»:

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1. վերնագրի «իրավասությունը» բառը փոխարինել «իրավասությունները» բառով.

2. 1-ին մասը~~ի~~ «է)» կետից հետո լրացնել նոր «է1) եւ է2) կետերով հետեւյալ բովանդակությամբ.

Է1) հաստատում է հուշարձանների տարածքներում տեղադրվող տեղեկատվական ցուցանակների ձեւը.

Է2) հաստատում է հուշարձանների պահպանական պարտավորագրի ձեւը:»:

Հոդված 5. Օրենքի 14-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 14. Հուշարձանների պետական ցուցակներում նորահայտ հուշարձան ընդգրկելը եւ ցուցակից հանելը

1.Հուշարձանների պետական ցուցակներում նորահայտ հուշարձան ընդգրկելը, ցուցակներից հանելը կատարվում է ըստ համապատասխան չափորոշիչների՝ լիազորված մարմնին կից գործող

փորձագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

2. Հուշարձանների պետական ցուցակում նոր հուշարձան՝ պատմամշակութային օբյեկտ ընդգրկելու ~~կամ նշված ցուցակից հուշարձան հանելու~~ առաջարկություն կարող են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության եւ օտար երկրների պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության գիտական, մշակութային կազմակերպությունները ու ստեղծագործական միությունները, ինչպես նաեւ կրոնական կազմակերպությունները՝ համապատասխան հիմնավորմամբ եւ տեղեկատվությամբ դիմելով լիազոր մարմնին:

3. Հուշարձանը պետական ցուցակից հանվում է միայն այն դեպքում, եթե այն այլեւս գոյութուն չունի կամ կորցրել է իր պատմամշակութային եւ գիտական արժեքը:»:

Հոդված 6. Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 22-րդ կետով.

«22) Կառավարության սահմանած կարգով իրականացնում է պետության սեփականությունը համարվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների գույքային պետականգրանցումը »:

Հոդված ~~6~~7. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 35.1 հոդվածով.

«Հոդված 35.1 Հուշարձանների նկատմամբ իրավունքների պետական գրանցումը
1. Հուշարձանների վերաբերյալ բոլոր գործարքների մասին տվյալները գրանցվում են լիազոր մարմնի կողմից:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման բնագավառի լիազոր մարմինը՝
1) պետական գրանցման օբյեկտը հուշարձան հանդիսանալու մասին տեղեկությունը ներառում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում.
2) հուշարձանի սեփականատիրոջ կամ օգտագործողի փոփոխության մասին տեղեկությունը տրամադրում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի լիազոր մարմնին:»:

Հոդված ~~7~~ 8. Եզրափակիչ և անցումային դրույթ~~ Եզրափակիչ եւ անցումային դրույթներ~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

~~2.~~ . Սույն ~~օրենքն~~օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով լրացվող էl) կետով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո~~՝ վեց~~՝ 9-ամսյա ժամկետում~~ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվում է հուշարձանների պետական ցուցակում նորահայտ հուշարձան ընդգրկելու եւ պետական ցուցակից հուշարձան հանելու վերաբերյալ չափորոշիչները:

~~3. Սույն օրենքն~~, իսկ 4-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող էl) և էՀ) կետերով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտերը՝ սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո~~՝ ~~ինն ամսում լիազոր մարմնի հրամաններով սահմանվում են հուշարձանների տարածքներում տեղադրվող տեղեկատվական ցուցանակների ձեւը եւ հուշարձանների պահպանական պարտավորագրի ձեւը:~~՝ 12-ամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-422-04.11.2022-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին					
1.	**ՀՀ կառավարություն**	**Վերնագիր**	Առաջարկում ենք հանել կրկնվող «Հայաստանի Հանրապետության» բառերը, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	**ՀՀ կառավարություն**	**2-րդ հոդվածով լրացվող նոր՝ 1.1-ին հոդվածի 1-ին մասի 21-րդ կետից հետո լրացվող նոր՝ 22-րդ կետ**	1-ին մասը լրացնել նոր 22-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «22) Համամարդկային նշանակության հուշարձան- Հայ ժողովրդի պատմության, նրա նյութական և հոգևոր մշակույթի նշանակալի հուշարձանների առավել բարձրարժեք, բացառիկ նմուշները, որոնք ունեն պատմության, արվեստի կամ գիտության տեսանկյունից բացառիկ համընդգրկուն արժեք՝ կարող են սահմանված կարգով ընդգրկվել համաշխարհային ժառանգության ցանկում:»: Լրացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենքում առկա հասկացությունների ցանկում	Ընդունվել է	Ընդունվել է

			բացակայում է համամարդկային հուշարձան հասկացությունը: Այն հնարավորություն կտա նաև օրենսդրորեն հայտ ներկայացնելու համաշխարհային ժառանգության ցանկերում՝ մեր պատմամշակութային ժառանգության համալրման ուղղությամբ:		
3.	*ՀՀ կառավարություն*	**3-րդ, 4-րդ հոդվածներ**	Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասի «1-ին մասում» բառերը, և 4-րդ հոդվածի 2-րդ մասի «1-ին մասի» բառերն առաջարկում ենք փոխարինել «1-ին մասը» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
	ՀՀ ԱԺ պատգամավոր Թագուհի Ղազարյան	**3-րդ հոդված,** **1-ին մաս**	Լրացնել «դ1)» կետով հետևյալ բովանդակությամբ. «դ1) հաստատում է պետական սեփականություն համարվող հուշարձանների գույքային իրավունքների պետական գրանցման կարգը.». Համարակալումը համապատասխանաբար փոխել	Ընդունվել է	Ընդունվել է
	ՀՀ ԱԺ պատգամավոր Թագուհի Ղազարյան	**5-րդ հոդված,** **2-րդ մաս**	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. 2. Հուշարձանների պետական ցուցակում նոր հուշարձան՝ պատմամշակութային օբյեկտ ընդգրկելու առաջարկություն կարող են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության եւ օտար երկրների պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության գիտական, մշակութային կազմակերպությունները ու ստեղծագործական միությունները, ինչպես նաեւ կրոնական կազմակերպությունները՝ համապատասխան հիմնավորմամբ եւ		

			տեղեկատվությամբ դիմելով լիազոր մարմնին:		
	ՀՀ ԱԺ պատգամավոր Թագուհի Ղազարյան	**Լրացնել նոր հոդված՝ օրենքի հոդված 20-ում փոփոխության վերաբերյալ**	Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդված՝ համարակալելով հոդված 6. Հոդված 6. Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 22-րդ կետով. «22) Կառավարության սահմանած կարգով իրականացնում է պետության սեփականությունը համարվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների գույքային պետական գրանցումը.»: Լրացումով պայմանավորված համապատասխանեցնել հոդվածների համարակալումը:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	**7-րդ հոդված**	7-րդ հոդվածը ներկայացնել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. *«Հոդված 7.* 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: 2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով լրացվող էՀ1) կետով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո՝ 9-ամսյա ժամկետում, իսկ 4-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող էՀ1) և էՀ2) կետերով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտերը՝ սույն օրենքը ուժի մեջ	Ընդունվել է	Ընդունվել է

			մտնելուց հետո՝ 12-ամսյա ժամկետում:»: Փոփոխությունը պայմանավորված է Նորմատիվ իրավական ակտերում իրավական նորմերի անհիմն կրկնությունները, և ներքին հակասությունները բացառելու նպատակով:		
«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	ՀՀ կառավարություն	**Վերնագիր**	Առաջարկում ենք հանել կրկնվող «Հայաստանի Հանրապետության» բառերը, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	**2-րդ հոդվածից հետո լրացվող՝ նոր 3-րդ հոդված**	Լրացնել նոր 3-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. «*Հոդված 3.* Օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 6-րդ ենթակետով. «6) Պետական գրանցման օբյեկտը հուշարձան հանդիսանալու մասին տեղեկությունը;»;» Լրացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված են վկայականում ներառվող տեղեկությունները: Ըստ այդմ հոդվածների համարակալումը փոխվել է:	Ընդունվել է	Ընդունվել է